

50 ԱՄԵԱՅ ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ ՅՈՐԵԼԵԱՆ

*«Վատնիր անխնայ եւ ստացիր քիչ
Առաջին զաւակ՝ դու Հայաստանի,
ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՑԻԶ:»
ՄԱՐՕ ՄԱՐԳԱՐԵԱՆ*

Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի ամավերջի հանդեսը համատեղուեց մի շատ հետաքրքիր յորելինական հանդիսութեան հետ: Վարժարանի Տեսչութիւնը գեղեցիկ գաղափար է ունեցել հանդիսաւորելու Տիկին Արփինէ Նազգաշեանի ուսուցչութեան 50 ամեակը: Երախտաւոր յարգանքի այս տուրքը համայնքին կողմէ իր սիրելի ուսուցչուհիին բերուած, առաւել եւս ընդգծուեցաւ, երբ անոր միացաւ Հայրապետական Կոնդակը:

3 Յունիս, երեկոյեան ժամը 7ին Պատրիարք Սրբազան Հօր նախագահութեամբ Թարգմանչաց ամավերջի հանդեսին Բ. մասը ամբողջապէս նուիրուած էր Յորելեարին: Գնահատանքի խօսքով հանդէս եկաւ վարժարանիս Տեսուչ Տ. Թէոդորոս Արք. Զաքարեան: Ան արտայայտուեցաւ նախկին տեսուչներու անունէն, որոնք երկար տարիներու ընթացքին վայելած են Տիկին Արփինէ Նազգաշեանի ուսուցչական բարձր արժանիքները: Այնուհետեւ, կարդացուեցաւ Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Օրհնութեան Գիր - Կոնդակը»: Երիտասարդ սերունդէն երգով եւ արտասանութեամբ հանդէս եկան Թարգմանչաց Վարժարանի վերջին դասարանի սաներ: Անմասն չմնացին իր անմիջական հարազատներէն զաւակները՝ Սարօ եւ Տֆ. Անուշ, եւ բարեկամները: Աշխարհի տարբեր ծայրերէն Յորելեարին աշակերտած անհատներ ու անճաւորութիւններ դրկած էին իրենց սրտի խօսքը: Հուսկ, խօսքը տրուեցաւ Տիկին Արփինէ Նազգաշեանին: Յուզումնալից սրտով ան շնորհակալութիւն յայտնեց կատարուածի համար, իր ուսուցչական տարիներէն քանի մը դրուագ համառօտելով:

Վերոյիշեալ իրողութիւնները վառ արտայայտութիւնն են ուսուցչուհի յորելեարին խնամքին յանձնուած հայ հոգիները հայացի մեծցնելու իր անվերապահ նուիրումին, որով անխոնջ ծառայած է իր ազգին սփիւռքին մէջ:

Վկայականներու եւ շրջանաւարտ դասարանի մրցանակներու բաշխումէն ետք, Պատրիարք Սրբազան Հայրը փակման խօսքին մէջ անդրադարձաւ մայրենի լեզուի ուսուցչուհիին, թէ տեղին է նման մեծարանքն ի պատիւ Յորելեարին, քանի որ մշակն արժանի է իր վարճին...:

Ի.Մ.